

ուր փրակական մասի մէջ, պիտի բոլսէ իբրև պատրաստ եզրակացութիւն առական մաս մուսած գէպքից կամ երևոյթից. ուստի շատ անգամ կարող է պատահել որ այդ իմաստը չի էլ ամփոփուում և զետեղուում առանձին, այլ հասկացուում է բուն փրակական մասի պարունակութիւնից: Լաֆոնտէնի գեղեցիկ սոսով գրած գովարտիկ և հմտալի առակաները մեծ ժողովրդականութիւն ստացան և նա լուսաւորուած ազգութիւնների համար երկրորդ եզրուպոս գարձաւ նրա առակաները թարգմանուած են գրեթէ բոլոր եւրոպական լեզուներով և սեփական (ինքնուրոյն) առակախօս չունեցող ազգերի գրականական այդ թերութիւնը լրացնում են:

Եզրուպոսի, ֆեզրոսի, Լաֆոնտէնի հարթած ճանապարհով գնում է Կոչլուր, որ աւելացնում է իւր նախորդների առակաների վերայ սեփական հանճարի թելագրածը և ռուս ժողովրդի բազմադարեան փորձառութեան արգասիքը:

(Վերջը միւս համարում)

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ.



ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Նմանազրութիւնս այսուհետեւ իւր բոլոր ստացած գրքերի մասին համառօտ զեկուցումս պիտի տայ:

Ժերենց: Երկունք—IX— դարու: Այս գիրքը սպուած է և հրատարակուած 1879 թուականին. բայց այս տարի Ագրիւր—Տարազի խմբ. պ. Տ. Մազարեանը գնելով մնացած օրինակները իբրև ընծայ է տալիս իւր բաժանորդներին: Գրքի սկզբին համեմատաբար 1879 թ. հրատարակութեան հետ այժմ աւելացած են. Ժերենցի և նրա աղջկայ պատկերները, մի մի ոտանաւոր Ժերենցի և նրա աղջկայ. Ժերենցի Ֆակսիմիլէն և կենսադրութիւնը և պ. Եղեկեանցի դամբանականը Ժերենցի դադաղի վրայ: Մենք յոյս ունէինք գրտնել այստեղ մի նոր և ամփոփ կենսագրութիւն. սակայն որքան զարմացանք, երբ տեսանք որ դա ոչ այլ ինչ է, եթէ « Арм. беллетристы »

պ. պ. Վիսելովսկու և Բերբերեանի հրատարակած ժողովածուի՝ Բերբերեանի յօդուածի ազաւաղած և կրճատած թարգմանութիւնը. առանց յիշատակելու անգամ յօդուածագրի անունը:

Ժերենցի « Երկունք » ունի նոյն առաւելութիւնները որ ունին նրա միւս գրուածքները « Թեոզորոս Ռշտունին » և « Թորոս Լեոնին »: Դուրս բերուած տիպերը աւելի զաղափարական են, քան ընդական. հերոսները և հերոսուհիները հին և ներկայ դարերու խառնուրդ են խօսում են, դատում են—որպէս մեր ժամանակակիցները, բայց սպրում—որպէս մեր նախնիքները: Ժերենցի լեզուն միշտ ճօխ է և պատկերական. պատմութեան նիւթը ընտրում է նա ճաշակով և միշտ հետաքրքրական է դարձնում: Եթէ այս բոլորին միացնենք այն վառ և ազնիւ հայրենասիրութիւնը որով տողորուած են նրա երեք պատմական վէպերն էլ, ու այն հանգամանքը—որ « Երկունք » ի նիւթը առած է Սասունցիների կեանքից, հասկանալի կլինի որ այս շարադրութիւնը կը կարգացուի, եթէ միայն չի կարգացուել մինչև այժմս մեծ հետաքրքրութեամբ:

2 Բարեգործութեան Դիմակի տակ: Հեղին. Էմին Տէր Գրիգորեանի: Դրամն 5 արարուածով 1895: Մեր աղքատիկ դրամատիկական գրականութիւնը հարստացաւ մի նոր և բաւական յաջող պիէսով, որի մէջ պատկերօրէն դուրս է բերուած մեր արդի կիանքի մի զիճը: Պ. Կեղեքեանը դրամայի զլխաւոր գործող անձն հարստութիւն է ձեռք բերում՝ ամեն տեսակ կեղտոտ և անվայել միջոցներով: Մի կողմից իր այդ կեղտերը ծածկելու և միւս կողմից—իւր անունը և անձը փառաւորելու համար նա չի ինայում հարիւրներ տալ բարեգործութեան համար: Եթէ տալիս է ո՛ր և է բարի գործի համար 100. ր դրա փոխարէն զիւզացուց 200 է հանում: Հասարակութիւնը Կեղեքեանին յարգում է մինչև այն ըոպէն, երբ նրա արարքները զիւզացիների շնորհիւ երևան են հանուում: Այս մթին և զաղանի երևոյթի հետ զուգընթաց դուրս է բերած իդէալական մի արարածի վիճակը, որը անբախտութիւն է ունեցել այսպիսի մի կեղեքիչի աղջիկ լինելու և աւելի ևս անբախտութիւն այդ բոլորը տեսնելու և նրանից զզուելու: Աղջիկը գնում է հօր դէմ և երբ վերջինս ուզում է իւր աղջկանը մի թեթևսօլիկ, բայց հարուստ երիտասարդի տալ, աղջիկը հակառակ հօր կամքին ամուսնանում է իր ուսուցչի հետ, որին նա սիրելիս է եղել: Ընտանեկան այս դժբաղտութիւնը միանալով հա-

բակու թեան գծգոհութեան հետ պերեզման են մտցնում Վեդիքեանին: Գրաման բաւական աշխոյժ է: ունի շատ սիրուն և գեղարուեստական կտորներ (II, III և IV գործողութիւնները): Լեզուն սահուն է:

Գրամայի ծագումը և զարգացումը իսկական հանգոյցը տարանջով է գուրս բերուած. միայն գրամայի լուծումը ընթերցողին խորթ պիտի թուայ որովհետև բացառիկ երեկոյթ է վերցրած (պատկի խորհրդի ժամանակ հարսը հրաժարուում է իւր փեսացուից և ձեռք է մեկնում իր կողքին կանչած սիրած անձին): Առաջին և վերջին արարուածների երկարութիւններն էլ բաւականի վնասում են պիէսի ամբողջութեան և միութեան: Բայց և այնպէս այս հեղինակութիւնն կը կարգացուի անշուշտ հետաքրքրութեամբ. իսկ բեմի վրայ, մի քանի փոխութիւնների ենթարկուելով կարող է մեր պիէաների մէջ առաջնակարգ տեղ բռնել:

Մ. Դատիսեան: Նոր ծանապարհի վերայ վէպիկ: 1895: Սա հեղինակի եթէ չենք սխալուած կրորդ վեպն է: Ըյժմ արդէն կարելի է ասել որ հեղինակին պահատում են վիպասանի զխառոր յատկութիւնները՝ բանաստեղծական կայծ, որի շնորհիւ պատմութեան թեքը հետաքրքրաշարժ է դառնում. ինքնուրոյնութիւն (օրիփինալիտէ), որի շնորհիւ նոր մտքեր են յայտնուում կամ նոր ձևով հին մտքեր, և վերջապէս—լեզուն ոճը: Ինչպէս միւս նոյնպէս մանաւանդ այս վէպը այնպիսի տպաւորութիւն է թողնում որ կարծես ասերենից թարգմանուած լինի, և այն այնպիսի մարդու ձեռքով որ ոչ հայերէն գրակ, ոչ ասերէն: Իւրականանանք մի քանի օրինակներով:

Ըջ 55 Գեօկչեանը լի կրճրով շնչեց (Вдохнул полною грудью): Սրա մտքը գնաց Լիզային (его мысли унеслись к Лизе):

Ըջ 189—Գեօկչեանին սիւեց ժպտալ իւր ապագան (начала улыбаться будущность):

Ըջ 78—հրձուելով Լիզայով (восхищаясь Лизой):

Ըջ 60. «անցնելով մի բարձրագոյն զբարոյցից միւսը, նա վերջապէս կանգ առաւ Մոսկուայի արխիեպական ուսումնարանի վրայ»: Ճիշդ է, ասերէն կարելի է այսպէս ասել բայց ոչ հայերէն: Վերջապէս օրինակները շատ են: Բացի գրանից կան բազմաթիւ խօսքեր, սրանց կողքին ասերէն նշանակութիւններն են գրուած և մեծաւ մասամբ անյաշոր: Ընդհանրապէս էլ լեզուն ծանր է և անմշակ: Բովանդակութիւնը չի կարելի անհետաքրքրելի անուանելը բայց և այնպէս անկապ և անհետաքրքրաշարժ է

պատմուած, այնքան աւելորդ խօսակցութիւններ ու պատմութիւններ կան մէջը, որ ընթերցողը մի տեսակ ուրախութիւն է գգում երբ վէպի վերջին է մօտենում: Եւ ինչ ասես չկայ այստեղ—և հայկական հարցը, և կրօնաւորների յարուցած հալածանքը, և աղգային գործունէութիւն, և վրացի իշխանուհի, և անանկութիւն

Մէմիքէիայում՝ զանոսաձ գերեզմանաբարը 1323 թուականի նայերէն եւ ասորերէն արձանագրութիւնով:

Այս յօդուածով [որը տպուած է Ռ. Հ. Ռ. Արեւելեան Բաժանմունքի Ժանուցագրերի մէջ] հայագէտ պ. Ս. Մառը ծանօթացնում է մեզ մի նոր գիւտի հետ, որ պատկանում է պ. Պանաուսովին՝ նրա 1892 թ. Սիմիրէիէիէյոււմ Պիշպեկեան Գերեզմանատան մէջ արած պեղումների ժամանակ: Մէմիքէիան գտնուում է Միջին Ասիայում, Բայբալեան լճից դէպի արեւելք, Նի գետի շուրջը: Գերեզմանաբարի ասորերէն արձանագրութիւնը կարգացուում է այսպէս՝ Սա Յովնան չայոց եպիսկոպոսի Գերեզմանն է: Քարի վերայ փորագրուած է մի խաչ, որի շորս անկիւններում հայերէն տառերով գրուած՝ Ք ս . Յ ս . Տ ր . Ա ծ . խաչի տակ Տէ՛՛ Յովնան չայոց եպիսկոպոս . իսկ խաչի միւս երեք կողմերը Ի թՎ . չայոց Է ժ չ Բ գրեցաւ յիշատակարան: Գրչադիտութեան տեսակետից այս արձանագրութիւնը շատ հետաքրքրաւից է, որովհետև այստեղ մենք գտնում ենք Ա . տառի այն ձևը, որը երկաթաղիբ [Ա] և բոլորդիբ [ա] այբերի մէջանդն է բռնում և ցոյց է տալիս այն աստիճանը, կրք այդ տառը երկգծանի ձևից սխալ էր երեքգծանի դառնալ: Այսպիսով մենք առաջին անգամ տեսնում ենք շեղագիր այբի գործածութիւնը արձանագրութեան մէջ: Արձանագրութեան բովանդակութիւնը շատ նշանաւոր է, որովհետև իրաւունք է տալիս կարծելու, որ այդ կողմերում (Մէմիքէիէիէյոււմ) եղել է հայկական մի ամբողջ գաղթականութիւն: Գուցէ սա այն քրիստոնեաներն են, որոնց մասին յիշում է Ճ. Գ. գարում Վարդանը իւր Աշխարհագրութեան մէջ, և պր. Գ. Սոլորսոնը, որ իւր Syriah—Nestor գրուածքի մէջ կարծիք է յայտնում թէ Մէմիքէիէիայում յիշատակուած Ս. Մատթէոսի վանքը պիտի նետաորականների վանք եղած լինէր: Յամենայն դէպս «աւելի պարզարանել այս հարցը և լոյս սփռել նրա վերայ, կարող են միայն յետազոյ գիւտերը» - ասում է պ. Մառը:

Փիմի: